

անընդհատ պրոցեսներ ստեղծելու վրա: Անհրա-
ժեշտ է նույնպես ամեն կերպ խորախուսել ու
աջակցել գործարանային լաբորատորիաների նա-
խաձեռնությունը և բարձրացնել նրանց դերը գո-
յություն ունեցող տեխնոլոգիական պրոցեսների
կատարելագործման, ինչպես նաև արտադրության
նոր եղանակների յուրացման և արմատավորման
գործում:

Խորհրդակցությունը հանձնարարեց նույնպես
ուսումնասիրել ռեսպուբլիկայի օրգանական սին-
թեզի արդյունաբերության հումքային բազայի հե-
ռանկարային ընդլայնման հարցը՝ հումքի ռե-
սուրսների մեջ, բացի բնական գազից, հեղուկ
նավթային ածխաջրածիններ լրացուցիչ կերպով
ներգրավելու միջոցով:

Ռեսպուբլիկայում օրգանական սինթեզի ար-
դյունաբերության զարգացման խնդիրների հաջող
լուծումն ապահովելու համար, անհրաժեշտ կազ-
մակերպչական միջոցառումների բնագավառում,
խորհրդակցությունը հանձնարարել է՝

1. Արագացնել Հայկ. ՍՍՌ ԺՏԽ Քիմիական
արդյունաբերության վարչության նոր գիտա-հե-
տազոտական և նախագծային ինստիտուտի կոմպ-
լեկտավորումն ու սարքավորումը:

2. Արագացնել Հայկ. ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի Օրգանական քիմիայի ինստիտու-
տում պոլիմերների և մոնոմերների սինթեզի գծով
նոր բաժնի կազմակերպումը և ընդլայնել ինստի-
տուտի մյուս լաբորատորիաները:

3. Արագացնել ВНИИСК-ի (Սինթետիկ
կաուչուկի համամիութենական գիտա-հետազոտա-
կան ինստիտուտի) ֆիլիալի կազմակերպումը,

այն կոմպլեկտավորել կադրերով և ապահովել
լաբորատորիաների ու փորձնական տեղակայում-
ների պատշաճ սարքավորումը:

4. Ռեսպուբլիկայի բուհերի համապատասխան
ամբիոնները լայնորեն ներգրավել քիմիական ար-
դյունաբերության զարգացման ակտուալ պրոբ-
լեմների ուսումնասիրության մեջ:

5. Ուժեղացնել ռեսպուբլիկայի գիտա-հետա-
զոտական հիմնարկների կապը կենտրոնական,
գիտական և նախագծային կազմակերպություն-
ների հետ:

Խորհրդակցությունը նշեց, որ ռեսպուբլիկա-
յում (բուհերում, համալսարանում, տեխնիկում-
ներում և անմիջականորեն արտադրության մեջ)
աճեցվել և դաստիարակվել են քիմիկոսների,
բանվորների, վարպետների, տեխնիկների, ինժե-
ներների և գիտնականների որակյալ կադրեր,
որոնք պրակտիկայում ցույց են տվել իրենց
հմտությունը՝ ժամանակակից քիմիական արդյու-
նաբերության բարդ արտադրական պրոցեսների
ստեղծման և զարգացման գործում:

Խորհրդակցությունը վստահություն հայտնեց,
որ Հայաստանի քիմիական արդյունաբերության
ձեռնարկությունների գիտնականները, գիտական,
ինժեներա-տեխնիկական աշխատողները և բան-
վորները գործի կղնեն իրենց բոլոր ջանքերը
ՍՄԿ Կենտկոմի Մայիսյան պլենումի տրոշում-
ների կենսագործման համար և ուժեղ վերելք
կստեղծեն ռեսպուբլիկայի քիմիական արդյունա-
բերության զարգացման, հատկապես, սինթետիկ
նյութերի և նրանցից պատրաստվող առարկաների
արտադրության գործում:

ԾԱԿՈՏԿԵՆ ԼՑԱՆՅՈՒԹԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1958 թ. հոկտեմբերի 22-ից մինչև 25-ը Երև-
վան քաղաքում կայացավ Դ. Ի. Մենդելևի ան-
վան համամիութենական քիմիական ընկերության,
Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետի Պետական
գիտա-տեխնիկական կոմիտեի և Հայկ. ՍՍՌ Շի-
նարարության մինիստրության Շինարարական
նյութերի և կառուցվածքների գիտա-հետազոտա-
կան ինստիտուտի կողմից կազմակերպված Հա-

մամիութենական խորհրդակցություն, որը նվիրված
էր շերմամեկուսացման համար և իբրև լցանյութ
բետոնի ու երկաթբետոնի համար օգտագործվող
ուռած միներալային և արհեստական նյութերի
արտադրության ընդլայնմանը:

Խորհրդակցության աշխատանքին մասնակցե-
ցին մոտ 500 հոգի, այդ թվում՝ 12 պրոֆեսոր և
63 գիտության թեկնածու, ՍՍՌՄ Մինիստրների

Սովետի շինարարության գործերի Պետական կոմիտեի, ՍՍՌՄ Շինարարության և ճարտարապետության ակադեմիայի, ժողտնտիստրհների, գիտա-հետազոտական, նախագծային և ռառմնական ինստիտուտների, Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Խարկովի, Բաքվի, Թբիլիսիի, Երևանի, Ռիգայի, Տալինի, Վիլնյուսի, Մինսկի, Լվովի, Իրկուտսկի, Ֆրունզեի, Նովոսիբիրսկի, Չելյաբինսկի, Կոլբիշևի, Վլադիվոստոկի, Մագնիտոգորսկի, Նիժնի Տագիլի և երկրի այլ քաղաքների աշխատողներ, ինչպես նաև Չխոստովակիայի Ժողովրդական Ռեսպուբլիկայից (ք. Բրատսկավա) ժամանած հյուրերը:

Իր պլենար և սեկցիոն նիստերում խորհրդակցությունը լսեց ու քննարկեց 54 զեկուցում ու հաղորդում և ծավալուն բանաձև ընդունեց նրանց շուրջը:

Խորհրդակցության մասնակիցների համար կադմակերպվեցին արտադրական էքսկուրսիաներ դեպի Հայաստանի շինարարական նյութերի ձեռնարկությունները, ինչպես նաև Հայաստանի շինարարական նյութերի ցուցահանդեսը:

Խորհրդակցությունը նշեց, որ մոտակա 10—12 տարիների ընթացքում բնակարանների կարիքը վերացնելու և 1960 թ. ավելի քան 130 մլն. մ² ընդհանուր տարածությամբ բնակելի տների շահագործման հանձնելու պլանն ապահովելու համար, պահանջվում է շինարարության մեթոդների արմատական վերակառուցում և, առաջին հերթին, շինարարական աշխատանքների ինդուստրացման զգալի բարձրացում, հավաքովի տների կառուցման լայն զարգացում խոշոր չափի կոնստրուկցիաների և շինվածքների կիրառությամբ: 1960 թվականին որմնաբլուկների արտադրությունը, 1956 թ. համեմատությամբ, ավելանալու է 15 անգամ, իսկ փոքր որմնաբլուկներինը՝ 3,2 անգամ:

2-րդ կլիմայական գոտու բնակելի տների որմնաբլուկների և պանելների մեջ թեթև բետոնների կիրառությունը թույլ կտա արտաքին պատերի հաստությունը 64 սմ-ից փոքրացնել մինչև 30—35 սմ: 1 մ² պատի կշիռը 1050 կգ-ից կիջնի մինչև 300 կգ, այսինքն՝ ավելի քան 3 անգամ:

Թեթև լցանյութերի ընդհանուր պահանջը նշված նպատակների համար 1960 թ. նախատեսվում է 18 մլն. մ³ և 1965 թ.՝ մինչև 32 մլն. մ³-ի քանակությամբ:

Այդքան մեծ քանակությամբ թեթև լցանյութերի ստացման համար առաջին հերթին հարկավոր է լայնորեն օգտագործել բնական թեթև լցանյութերը և տարբեր տեսակի խարամները:

Հրաբխային ծագում ունեցող բնական թեթև լցանյութեր կան Սովետական Միության մի շարք շրջաններում, բայց հիմնականում նրանք կենտրոնացված են Հայկ. ՍՍՌ տերիտորիայում, որտեղ գտնվում են նրանց համարյա բոլոր տարատեսակները (պեմզաներ, տուֆեր և հրաբխային խարամներ), որոնք թույլ են տալիս ստանալ 600-ից մինչև 800 կգ/մ³ ծավալային կշռով բետոններ, համապատասխանորեն 10-ից մինչև 500 կգ/սմ² ամրության դեպքում:

Այդ նյութերի պաշարները հաշվվում են միլիարդավոր խորանարդ մետրերով և տարածվում են փոքր ջրաբերուկների տակ: Հիմնականները նրանցից գտնվում են երկաթուղիների գոտում: Ներկայումս հետախուզված է տուֆի մոտ 70 հանքավայր և պեմզայի ու հրաբխային խարամների 40 հանքավայր:

Հայկական բնական ծակոտկեն լցանյութերը բնութագրվում են տեխնիկա-տնտեսական բարձր ցուցանիշներով, վառելիքի ծախս և արդյունաբերական բարդ տեղակայումներ չեն պահանջում: Նրանց բացթողման արժեքը, տեսակավորված վիճակում, կազմում է 14 ռուբլի՝ 1մ³-ի համար: Գործող երկաթուղային տարիֆների և 50—55 ռուբլի ֆրանկո-սպառողի գնի դեպքում, տեղափոխումների մամենամեծ շառավիղը կազմում է 1500 կմ, իսկ երկաթուղային և ջրային խառը տեղափոխումների դեպքում, նույնպես ըստ գործող տարիֆների, 1 մ³-ի նշված արժեքն ստացվում է 2600—2800 կմ տեղափոխումների շառավղով: Այդ նկատառումներից ելնելով, բնական ծակոտկեն լցանյութերի հանույթը անհրաժեշտ է կտրուկ կերպով ավելացնել:

Թեթև բետոնների համար իբրև ծակոտկեն լցանյութեր կարող են օգտագործվել նաև Օդեսայի, Նիկոլաևի և Խերսոնի մարզերում, Ղրիմում, Կասպից ծովի արևելյան ափին և Մոլդովական ՍՍՌ-ում գտնվող խեցաքարի բացահանքերի մնացուկները:

Շինարարության մեջ կարող են օգտագործվել նաև վառելանյութի խարամային ռեսուրսները՝ երկրի վառելանյութի խարամների և մոխիրների

ընդհանուր ելունքի 20 %-ից ոչ ավելի չափով, այսինքն՝ 1960 թ. համար մոտ 9 մլն. տ:

Այն շրջաններում, որտեղ բացակայում են թեթև լցանյութերը կամ նրանց համապատասխան արդյունաբերական մնացուկները, անհրաժեշտ է կազմակերպել արհեստական թեթև լցանյութերի արտադրություն:

Ածխահարստացնող ֆաբրիկաների մնացուկները պարունակում են մոտ 40 % ածուխ: Ազլոմերացիոն ցանցերով եռակալիլու միջոցով այդ մնացուկներից կարող են ստացվել ծակոտկեն լցանյութեր:

Պտտվող վառարաններում կերամզիտ և ազլոմերացիոն ցանցերով եռակալիլու միջոցով ծակոտկեն լցանյութեր ստանալու համար Սովետական Միության զանազան շրջաններում փորձարկվել են կավի 140 հանքավայրեր: Կավային հումքի պաշարները գործնականորեն անսահմանափակ են:

ՍՍՄՄ-ում գտնվում են պեռլիտի մի շարք հանքավայրեր: Միայն Հայկական ՍՍՄ-ում պեռլիտների և օբսիդիանների պաշարները երեք հանքավայրում (Արթենի, Ախտայի և Սիսիանի) կազմում են ավելի քան 400 մլն. մ³:

Մեծ քանակությամբ պեռլիտներ և օբսիդիաններ կան Ադրբեջանական ՍՍՄ-ի Քեյբաջարի շրջանում: Ղազախական, Ուկրաինական, Տաջիկական ՍՍՄ, Զիտայի մարզում, իսկ Պրիմորյեի երկրամասում եղած հանքավայրերի պաշարներն ուսումնասիրման ստադիայումն են գտնվում:

Խարամներից, մոխրից, հանքահորային և կավային այլ ապառներից նրանց ազլոմերացման մեթոդով ծակոտկեն լցանյութերի ստացման տեխնոլոգիայի մշակմամբ զբաղվում են Սովետական Միության մի շարք գիտա-հետազոտական, նախագծային և արտադրական կազմակերպություններ: Կատարվել է հումքի մեծ քանակությամբ նմուշների լրիվ տեխնոլոգիական փորձարկումը, սակայն խորհրդակցությունը նշեց ազլոպորիտի գործարանային արտադրության զարգացման գործում եղած ծայրահեղ դանդաղկոտությունը:

ՍՍՄՄ-ում խարամային պեմզայի արտադրության տեխնոլոգիայի մշակմամբ զբաղվում են ավելի քան 15 տարի: Միաժամանակ, պետք է նշել, որ խարամային հալվածքում նրա ծակոտկենացման ժամանակ տեղի ունեցող պրոցեսների ուսումնասիրությունը բավարար տեսական բազա

դեռևս չունի և կատարվում է առանց միասնական դիտական մեթոդների և առանց ֆիզիկական քիմիայի, բյուրեղագիտության, լուգունի մետալուրգիայի և այլ հարակից դիսցիպլինների մեթոդների կիրառման:

Խորհրդակցությունում կերամզիտի հարցի բնականորեն ցույց տվեց, որ շնայած նրա արտադրության կազմակերպման բնագավառում ձեռք բերված մասնակի հաջողություններին, ընդհանուր արդյունքները միանգամայն անբավարար են:

Առանձին նշանակություն տալով ծակոտկեն լցանյութերի արտադրության զարգացմանը, խորհրդակցությունը անհրաժեշտ գտավ հանձնարարել կենսագործելու հետևյալ միջոցառումները.

ՍՍՄՄ ՊԳՏԿ-ին կից ստեղծել թեթև լցանյութերի գծով մշտապես գործող գիտա-տեխնիկական հանձնաժողով, որի կազմի մեջ մտցնել արտադրական, նախագծային և գիտական կազմակերպությունների որակյալ մասնագետներին:

Խնդրել Դ. Ի. Մենդելևի անվան Համամիութենական քիմիական ընկերության նախագահությանը՝ հարց բարձրացնել ՍՍՄՄ Բարձրագույն կրթության մինիստրության առաջ՝ «Ծակոտկեն լցանյութերի տեխնոլոգիա»-ի մասնագիտացումով շրջանավարտ սիլիկատագործ ինժեներների ավելացման մասին:

Անհրաժեշտ համարել պեմզաների, հրաբխային խարամների, տուֆերի և այլ բնական թեթև լցանյութերի գծով երկրախուզական աշխատանքների ավելացումը ՍՍՄՄ տերիտորիայում և, առաջին հերթին, ՌՍՖՍՄ, Հայկական ՍՍՄ, Ուկրաինական ՍՍՄ և Ղազախստանի տերիտորիաներում:

1960 թվականին Հայկական ՍՍՄ-ում պեմզախարամային նյութերի հանույթը հասցնել մինչև 1,6 մլն. մ³ և 1965 թվականին՝ մինչև 2,5 մլն. մ³:

Հայաստանից՝ ՍՍՄՄ մյուս տնտեսական շրջանները բնական ծակոտկեն լցանյութերի և նրանցից պատրաստված շինվածքների տարեկան արտահանումը հասցնել մինչև 2 մլն. մ³:

Տուֆային բացահանքերում գոյացող մնացուկների բազայի վրա կազմակերպել տուֆային լցանյութերի արտադրություն՝ նրանց թողարկումը 1956 թ. հասցնելով մինչև 1 մլն. մ³:

Նպատակահարմար համարել արհեստական ծակոտկեն լցանյութեր (կերամզիտ և այլն) թո-

ղարկող ձեռնարկությունների շինարարությունը այն տնտեսական շրջաններում, որոնք կարող են նրանցով մատակարարվել, հաշվի առնելով տեղափոխության տնտեսապես նպատակահարմար շտապիղը:

Ազդուորիտների արտադրությունը շուտափույթ կերպով կազմակերպելու համար, նպատակահարմար համարել առաջին հերթին այնպիսի ձեռնարկությունների կառուցումը, որոնք իբրև հումք օգտագործում են առանց վառելանյութի կամ վառելանյութային հավելույթների մուծում չպահանջող արդյունաբերական մնացուկներ:

Հետագայում, մինչև օպտիմալ արտադրողականությանը (տարեկան 100 և ավելի հազար մ³) տեղակայումներում ազդուորիտների արտադրության համար ոչ ստանդարտ սարքավորման սերիական թողարկման կազմակերպումը, նպատակահարմար համարել նրանց պատրաստումը զարգացնել ոչ մեծ արտադրողականության (տարեկան 10—25 հազար մ³) տեղակայումներում՝ պարբերական գործողության ազդուներացիոն թասերի կիրառմամբ:

Մետալուրգիական ձեռնարկությունների ունեցող տնտեսական վարչական շրջաններում մոտակատարիներին անհրաժեշտ է կազմակերպել մետալուրգիական խարամների հալքերից ստացվող թեթև լցանյութերի արդյունաբերություն՝ տարեկան առնվազն 6 մլն. մ³ ընդհանուր կարողությունամբ, այդ թվում՝ 1960 թ. մոտ 2,7 մլն. մ³:

Անհրաժեշտ համարել լավ ուղող կամ լավ ուղչելու համար էժան հավելույթներ պահանջող կավային ապառներից կերամզիտի արտադրությունը կազմակերպել այն շրջաններում, որտեղ բացակայում են էֆեկտիվ բնական թեթև լցանյութեր կամ արդյունաբերական այնպիսի մնացուկներ, որոնք կարող են օգտագործվել իբրև լցանյութեր:

Կենտրոնական ջերմային էլեկտրակայանից հեռացող մեծ քանակությամբ մոխրի ուտիլիզացիայի համար, որպես նրա էֆեկտիվ օգտագործման միջոցներից մեկը, առաջարկել մոխրի վերամշակումը թեթև բետոնի համար պիտանի մոխրակուպիճի:

Խնդրել ՍՍՄՄ Երկրաբանության և ընդերքի պահպանության մինիստրությանը՝ 1959 թ. ավարտել երկրաբանական-հետախուզական աշխա-

տանքները, որոնք վերաբերում են Հայկական, Ադրբեջանական, Ղազախական և Ուկրաինական ՍՍՌ-ում, Ջիտայի մարզում, Բուրյատ-Մոնղոլական ՍՍՄՌ-ում պեռլիտների և օբսիդիանների հայտնաբերված հանքավայրերին, ինչպես նաև Մուրմանսկի ու Իրկուտսկի մարզերում և Կրասնոյարսկի երկրամասում վերմիկուլիտների հայտնաբերված հանքավայրերին, ճշտելով այդ հանքավայրերի պաշարները:

1959—1960 թթ. երկրաբանական-հետախուզական աշխատանքներ անցկացնել՝ Հեռավոր Արևելքի, Տաջիկական ՍՍՌ, Հյուսիսային Կովկասի և այլ շրջաններում, պեռլիտների և օբսիդիանների նոր հանքավայրեր հայտնաբերելու համար, ինչպես նաև պեռլիտների և վերմիկուլիտների հանքավայրեր ՍՍՄՄ-ի մյուս շրջաններում:

Անհրաժեշտ համարել 1959—1960 թթ. Հայկական ՍՍՌ-ում, Արևելյան Սիբիրում և Անդրկարպատյան ՌԽՍՄ-ում կազմակերպել խոշոր մեքենայացված բացահանքեր:

Պենոկերալիտի արդյունաբերական արտադրության համար տիպային սարքավորում մշակելու նպատակով՝ հանձնարարել Ապակու ինստիտուտին և Գլավմոսօբլստրոյմատերիալին կազմակերպելու հովվակավոր վառարանի և ինքնատար դարակներով ուղղաձիգ տիպի տեղակայումի տեխնոլոգիական ստուգումը:

Խոշոր քաղաքներին կից և խիտ շինարարության շրջաններում հանձնարարել զանազան տեսակի փրփրապակու արտադրության տեղակայումների շինարարությունը՝ տարեկան առնվազն 50 հազ մ³ կարողությունամբ, և բջիջավոր կերամիկայից շինարարական և ջերմամեկուսիչ բլոկներ ու սալեր արտադրելու արդյունաբերական նշանակություն ունեցող փորձնական գործարանի շինարարությունը՝ տարեկան առնվազն 50 հազ. մ³ արտադրողականությամբ:

Խորհրդակցություն անհրաժեշտ գտավ առաջարկելու գիտա-հետազոտական ինստիտուտներին, մոտակա 2—3 տարում, լուծել կերամզիտի արտադրության մի շարք հարցեր, այդ թվում՝ մշակել հումքի տեխնիկական պայմանները, հումքի պատրաստման եղանակները, կերամզիտի որակի բարձրացման պայմանները, կերամզիտի արտա-

դրությունն ավտոմատացման միջոցառումները և այլն:

Պետլիտի և օբսերվանթի պծով տարվող գիտահետազոտական աշխատանքում հիմնական համարել հետևյալ ուղղությունները՝ պետլիտի և օբսերվանթի տուչելու պրոցեսների հետազոտությունը, տարբեր հանքավայրերի հումքի ուսումնասիրությունը, տարբեր տիպի ագրեգատների աշխատանքի ունեցիմի հետազոտությունը, ուռած պետլիտից ջերմամեկուսիչ շինվածքների և թեթև բետոնների արտադրության տեխնոլոգիայի մշակումը և այլն:

1959—1960 թթ. պլանի մեջ անհրաժեշտ է մտցնել կոմպլեքսային թեմա՝ ագլոմերացիոն ցանցերում եռակավման և ուռչելու պրոցեսների ֆիզիկա-քիմիական էությունն ուսումնասիրելու գծով:

Խարամային պեմզայի գծով գիտահետազոտական կազմակերպությունների ուշադրությունն անհրաժեշտ է դարձնել 1959—1960 թթ. մշակելու թարմ ուռած խարամի տերմիկական մշակման կառավարելի եղանակը, խարամային հալվածքների գազայնության արագ որոշման եղանակը, ուռչելու պրոցեսների տեսական հիմնավորումները և այլն:

Ագլոպորիտի արտադրությունը կատարելագործելու համար, 1959—1962 թթ. անհրաժեշտ է ապահովել՝ կալային ապառներից և ածուխ պարունակող մնացուկներից ստացվող խառը բովախառնուրդի ընտրության եղանակի մշակումը, արտադրության ռացիոնալ մեթոդների մշակումը և ագլոպորիտով թեթև բետոնների հատկությունների

ճշտումը, հումքի ընտրության և ագլոպորիտի որակի գնահատման նորմատիվ փաստաթղթերի նախագծերի ճշտումը և այլն:

Խորհրդակցությունն անհրաժեշտ գտավ հարց հարուցել համապատասխան օրգանների առաջ՝ շինարարական նյութերի և կառուցվածքների Հայկական գիտահետազոտական ինստիտուտի ընդլայնման անհրաժեշտության մասին, նպատակ ունենալով ավելի լայն ուսումնասիրել քարե որմնանյութերի, թեթև բնական նյութերի կիրառման հետ կապված հարցերը, ինչպես նաև նրանց հիման վրա՝ թեթև բետոնների լայն կիրառումը:

Խնդրել ՍՍՌՄ Պետշինին և ՍՍՌՄ Շինարարության և ճարտարապետության ակադեմիային՝ շինարարական ֆիզիկայի և շրջափակող կոնստրուկցիաների գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր կարևորագույն գիտահետազոտական աշխատանքների պլանի մեջ մտցնել ուռած հանքային բնական նյութերի թեթև բետոններից պատրաստված շրջափակող կոնստրուկցիաների մշակումն ու ուսումնասիրությունը:

Գիտահետազոտական աշխատանքի կազմակերպման գծով անհրաժեշտ համարել զարգացնելու գիտահետազոտական ինստիտուտների, գործարանների, գործարանային գիտահետազոտական լաբորատորիաների և կառույցների աշխատողների ստեղծարար համագործակցությունը:

Նախագծման հարցերի գծով խնդրել ՍՍՌՄ Պետշինին՝ ընդարձակել այն ինստիտուտների թիվը, որոնք զբաղվում են արհեստական թեթև լցանյութերի գործարանների նախագծմամբ:

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԱՎՏՈՄԱՏԻԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԾՈՎ ԱՌԱՋԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիային կից կազմակերպվել է Սովետական Միության Ազգային կոմիտե ավտոմատիկ կառավարման գծով:

Ավտոմատիկ կառավարման գծով միջազգային ֆեդերացիան (ԻՖԱԿ) ավտոմատիկ կառավարման գծով Սովետական Միության Ազգային կոմիտեին հանձնարարել է կազմակերպել ու անցկացնել Առաջին միջազգային կոնգրեսը, որը կհայանա

Մոսկվայում, 1960 թ. հունիսի 25-ից մինչև հուլիսի 5-ը:

Կոնգրեսի գիտական ծրագիրը

Կոնգրեսում աշխարհի շատ երկրներից կլսվեն ու կքննարկվեն ղեկուցումներ, որոնք կընդգրկեն տեսական և կիրառական հարցեր ավտոմատիկ կարգավորման ու կառավարման, ավտոմատիկայի